ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 սեպտեմբերի 2013 թվական թիվ 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' , ,,ԴԻԼԻՋԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՝ ,, ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԲԸ-ՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետը, 226-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 16-ի թիվ ԴԴ/05/9130-13 գրությունը, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզպետի մոտ 27.08.2013թ. կայացած խորհրդակցության ընթացքում քննարկումների արդյունքները

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Արծվաբերդի բնակչուհի, ծննդկան Սրբուհի Արթուրի Մարդանյանի նկատմամբ ,,Բերդի ԲԿ'' , ,,Իջևանի ԲԿ'' և ,,Դիլիջանի ԲԿ'' ՓԲԸ-ներում համապատասխան անհրաժեշտ բուժօգնություն չցուցաբերելու և բժշկին ոչ հարիր վարքագիծ ցուցաբերելու համար վերոնշյալ բուժհաստատությունների տնօրեններին՝ Արամ Հարությունյանի, ժ/պ Հրաչյա Ներսիսյանի և Սիլվա Պետրոսյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:
2. Հանձնարարել ,,Բերդի ԲԿ'', ,,Իջևանի ԲԿ'' և ,,Դիլիջանի ԲԿ'' ՓԲԸ-ների տնօրեններին՝ խստագույնս ուժեղացնել հսկողությունը ծննդօգնության գործունեության նկատմամբ, բացառելով նմանապիտ դեպքերը:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

04 սեպտեմբերի 2013 թվական
Ք. Իջևան